ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուղատնտեսություն.

Բուսաբուծություն. 2014թվականին մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում ցանված ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ պատկերը.

Հացահատիկ՝ 2013թ.-42381հա 2014թ.-43916հա-ի դիմաց, կարտոֆիլ՝ 2013թ.-4219հա 2014թ.-4267հա- ի դիմաց, կերային մշակաբույսեր՝ 2013թ.-12600հա 2014թ.137331հա-ի դիմաց, բանջարեղեն՝ 2013թ.-1634հա 2014թ.-1696հա-ի դիմաց:

Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են շուրջ 2782 հա-ով: Մարզում ընդհանուր ցանքը 2014թ. կազմել է 63646ա, նախորդ տարվա 60864հա-ի դիմաց:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում.

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		**Աճ կամ պակաս /հա/**
		2013թ.	2014	
1.	Հացահատիկ	42381	43916	**+1535**
	Այդ թվում՝ աշնանացան ցորեն	22698	24388	**+1690**
	գարնանացան գարի	19683	19528	**-155**
2.	Կարտոֆիլ	4219	4267	**+48**
3.	Բանջարեղեն	1634	1696	**+62**
4.	Կերային մշակաբույսեր	12600	13733	**+1133**
5.	Տեխնիկական մշակաբույսեր	30	34	**+4**
		60864	63646	**+2782**

Ընթացիկ տարում բերքահավաքը կատարվել է ժամանակին առանց ձգձգումների, բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2013-2014թթ. ունի հետևյալ տեսքը.

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Միջին բերք /գ/		Համախառն բերք /տ/		**Համա-խառն բերքի աճ /հազ. տոննա/**	Համախառն եկամուտ /մլրդ դրամ/		**Համա-խառն եկամուտի աճ կամ պակաս /մլրդ դրամ/**
		2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.		2013թ.	2014թ.	
1.	Հացահատիկ	42381	43916	30.8	30.9	130582	120601	**-9981**	16.9	15.6	-1.3
2.	Կարտոֆիլ	4219	4267	250	218	105517	106861	**+1344**	12.6	16	+3.4
3.	Բանջարեղեն	1634	1696	276	306.	45141	52790	**+7649**	4.5	5.27	+0.77

4.	Պտուղ	485	485	157.8	185	7732	9000	**+1268**	0.7	1.8	+1.1
6.	Խոտ					12325 3	12500 0	**+1747**	3.6	6.2	+2.6
7.	Այլ		-	-	-	-	-	-	16.85	11.13	
Ընդամենը			**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**55.15**	**56.0**	**+0.85**

2015թ. բերքի տակ ցանվել է 26545հա աշնանացան ցորեն, կատարվել է ցրտահերկ 13665հա: Աշնանացանի ցանքատարածությունների վիճակի ուսումնասիրությունից պարզվել է, որ վիճակը բարվոք է և 2015թ. կարելի է ակնկալել բարձր բերք: Բուսաբուծության բնագավառում ստացված արտադրանքի իրացման արդյունքում 2014թ. ստացված եկամուտը կազմում է շուրջ 56.0 մլրդ դրամ, նախորդ տարվա 55.15 մլրդ դրամի դիմաց:

Սերմացուների բաշխման եւ վերադարձելիության ամփոփում.

«Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիր».

2011-2012թ. Էլիտային վերարտադրություն.

ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 297-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով» 2014 թվականին ՀՀ Շիրակի մարզի 7 եւ ավելի հեկտար հողատարածք ունեցող շահառուների հայտերը ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն.

2014թ.		**2013թ.**	
սերմացու	**120.05 տ**	**սերմացու**	**120.15տ**
շահառու	**35**	**շահառու**	**38**
հողատարածք	**400.17հա**	**հողատարածք**	**400.5հա**

2014թ. Էլիտային վերարտադրությունից ստացված առաջին վերարտադրության ցորենի սերմացուի հետվերադարձն ամբողջությամբ իրականացված է*:*

2014. առաջին վերարտադրություն.

ՀՀ Կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 297-Ն որոշմամբ ընդունված <<Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով>> 2014 թվականին ՀՀ Շիրակի մարզի 0.4-3հա հողատարածք ունեցող գյուղացիական տնտեսություններին հատկացվել է.

սերմացու 1900 տոննա
համայնք 68
հողատարածք 6333 հա

Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գարնանացանի համար իրականացված աջակցության ծրագրեր.

Գարնանացան գարու սերմ **57,878 տ, 290հա, 154 շահառու**
Կորնգանի սերմ **45.7 տ , 305հա, 267 շահառու**
Առվույտի սերմ **7.223 տ, 289 հա, 307 շահառու**

Եգիպտացորենի սերմ **0.995 տ, 40 հա, 28 շահառու**

Վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված գարնանացան գարու, եգիպտացորենի,և առվույտի սերմացուների բաշխում.

Գարնանացան գարու սերմ **569.822 տ, 2849հա,**
Առվույտի սերմ **49.807 տ, 1992 հա,**
Եգիպտացորենի սերմ **12.255 տ, 490 հա,**

«ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 4888.05տ ազոտական պարարտանյութ, որի գումարը կազմում է 586,566 մլն դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 195.522 մլն դրամ:

ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վեռալանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 3438364 լիտր դիզելային վառելանյութ, որի գումարը կազմում է 1203.4274 մլն դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 302.576 մլն դրամ:

«ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով կալիումական և ֆոսֆորական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզին հատկացվել է 92.85տ կալիումական և 92.1տ ֆոսֆորական պարարտանյութ, որի ընդհանուր գումարը կազմում է 25.89 մլն դրամ, պետության կողմից սուբսիդավորման գումարը՝ 7.398 մլն դրամ:

Նոր գյուղատնտեսական տեխնիկայի ներկրում. Գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները.

2014թ. գյուղատնտեսական տեխնիկայի առկայության, տեխնիկական վիճակի և տեխնիկայով գյուղացիական տնտեսությունների ապահովվածության մակարդակը.

h/h	Տեխնիկայի անվանումը	2014թ.		
		Առկա քանակը /միավոր/	Սարքինության մակարդակը /%/	100 տնտեսությունը հաշվով ապահով. /%/
1.	Տրակտորներ	1647	73.4	4.9
2.	Բեռնատար ավտոմեքենա	1296	74.3	3.8
3.	Հացահատիկահավաք կոմբայններ	324	65.4	0.93
4.	Կցասայլեր	806	85.7	2.4
5.	Խոտհնձիչներ	197	83.8	0.54
6.	Կերահավաք կոմբայններ	78	51.3	0.18
7.	Հատիկազտիչ մեքենաներ	62	80.6	0.17
8.	Շարքացաններ	389	84.8	1.07
9.	Գութաններ	549	98.4	1.6
10.	Կուլտիվատորներ	445	77.5	1.1

11.	Հավաքիչ-մամլիչ	224	81.3	0.48

2014թ. «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» ծրագրի շրջանակներում մարզի 7 համայնքներ ձեռք են բերել գյուղատնտեսական տեխնիկա եւ գյուղ. գործիքներ՝

Բենիամին – 1 հատ ՄՏԶ_82 տրակտոր,
Արևշատ– 2 հատ անիվավոր տրակտոր եւ գյուղ. գործիքներ,
Սարալանջ- 2 հատ անիվավոր տրակտոր,
Նահապետավան– 2 հատ անիվավոր տրակտոր,
Ծաղկուտ – 2 հատ անիվավոր տրակտոր,
Հոռոմ– 1 հատ անիվավոր տրակտոր,
Գուսաննա Т-150 2հատ:

Հակակարկտային միջոցառումներ. 2014թ. կարկտահարության պատճառով տուժել են մարզի 37 թվով համայնքների գյուղացիական տնտեսությունների գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 50%-ից մինչեւ 100% 11500 հա, վնասի չափը կազմել է 3.359572մլրդ դրամ, նախորդ տարվա 487.0մլն դրամի դիմաց:

Մարզում 2014թ. ընթացքում **համայնքների եւ դոնոր կազմակերպությունների միջոցներով** տեղադրվել են 12 հակակարկտային կայանքներ՝ Բագրավան-2, Աղին-1,Շիրակավան-1,Արեվիկ-2,Փանիկ-2,Վահրամաբերդ-2,Հայկավան-1,Ախուրյան-1 տրիո:

Այժմ մարզի 23 համայնքներում տեղադրված են ընդհանուր թվով 56հակակարկտային կայանքներ:

Բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ.

Մարզի թվով 22 համայնքներում իրականացվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդություններով և վնասատուներով վարակվածության աստիճանի ուսումնասիրություն՝ 10020 հեկտարի վրա- մորեխներով, 14466հեկտարի վրա- մկներով, 1450 հեկտարի վրա- ցորենի մրրիկ ժանգով,627հեկտարի վրա-բանջարանոցային մշակաբույսերի վնասատուներով, 337հեկտարի վրա- պտղատու այգիների պտղակեր վահանակիր հիվանդություններով վարակվածությունների:

Մկնանման կրծողների դեմ զարնանային պայքարի միջոցառում է իրականացվել թվով 18 համայնքներում՝ 422.88 կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի մկնասպան թունանյութ՝ 3524 հեկտարի վրա և աշնանային պայքարի միջոցառում թվով 36 համայնքներում՝ 1089 կգ՝ 9075 հեկտարի վրա: Միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ, համապատասխան ակտերը ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Ոռոգում.

2014թ. տեղումների քանակը միջին նորմային մոտ էր, ինչպես նախորդ տարի, այնպես էլ այս տարի ոռոգման ջրի մատակարարման հարցում <<Շիրակ>> ՋՕԸ-ի կողմից խնդիրներ չեն առաջացել, ոռոգման ջրի մատակարարումը սպառողներին իրականացվել է ժամանակին ու անկորուստ: 2014թ. ոռոգման սեզոնի ընթացքում համայնքների ղեկավարների կողմից ոչ մի ահազանգ չի ստացվել ջրի ծավալի, մատակարարման ժամկետի ու գրաֆիկի խախտման վերաբերյալ:

<<Շիրակ>> ՋՕԸ-ի 2013-2014թթ. ջրառը, ջրտուքը և գանձումները 17.12.2012թ. դրությամբ հետևյալն են.

«Շիրակ»	Ստացված	Հասույթը	Գանձված է	Պարտքը	**Գանձման**

ՋՕԸ	ջուրը հազ. մ³		հազ. դրամ		հազ. դրամ		հազ. դրամ		%-ը	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
Ընդամենը՝	**10781**	9889	118591	108779	110846.5	101803.5	7745	6975	93.5	93.6

Ընդհանուր վճարումների տոկոսը կազմում է 93.6% նախորդ տարվա 93.5%-ի դիմաց: 2014թ. ջրառից ստացվել է 19390.2 հազ. մ³ ջուր, նախորդ տարվա 22853.1հազ. մ³ ջրի դիմաց:

Ջրամբարների լցվածությունը 16.12.2014թ. դրությամբ `

h/h	Ջրամբարի անվանումը	Ծավալը մլն մ³	Լցվածությունը առ 16.12.2013թ. մլն մ³	Լցվածությունը առ 16.12.2014թ. մլն մ³
1	Արփի լիճ	105,0	11.0	8.5
2	Կառնուտ	22,6	7.5	4.3
3	Սառնաղբյուր	4,8	0.30	0.31
4	Վարդաքար	5,0	0.2	0.46
5	Թավշուտ	6,0	0.75	0.57
6	Մանթաշ	8,2	1.25	1.16
7	Ջաջուռ		0.16	0.16
ԸՆԴԱՄԵՆԸ՝		151,6		

«Շիրակ» ՋՕԸ-ի կողմից 2014թ. իրականացվել են ոռոգման նախապատրաստական աշխատանքներ՝

1. Ոռոգման ցանցի մաքրում-34.74 մլն դրամ,
2. Ոռոգման ցանցի վերանորոգում - 3.26 մլն դրամ,
3. Հիդրոտեխնիկական կառուցվածքների նորոգում- 9.85մլն դրամ,
4. Պոմպակայանների նորոգում – 3.26 մլն դրամ
5. Մեքենամեխանիզմների նորոգում -7.08մլն դրամ

Անասնապահություն.

Հունվարի 1-17-ը անցկացվել է գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառում, որի արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2013-2014թթ. արդյունքների համեմատականով/.

	Խ.ե.կ. /հազ. գլուխ/		Որից՝ կովեր /հազ. գլուխ/		Խոզեր /հազ. գլուխ/		Ոչխարներ եւ այծեր /հազ. գլուխ/		Թռչուններ /հազ. թև/	
	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
	105.7	107.97	50.1	50.5	15.7	13.8	86.4	90.4	206.4	188.8
աճ/պակաս /+/-/		**+2.27**		**+0.4**		**-1.9**		**+4.0**		**-17.6**

ՀՀ Շիրակի մարզում անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության 2013-2014թթ. համեմատական ցուցանիշները.

Անասնաբուծական մթերք	2013թ. համախառն արտադրանքը	2014թ. համախառն արտադրանքը	**Համախառն արտադրանքի աճ կամ նվազում**	2013թ. գումարը / մլրդ դրամ/	2014թ. գումարը /մլրդ դրամ/
Միս /հազ. տ/	21.4	21.9	**+0.5**	42	43.6
Կաթ /հազ. տ/	107.6	114.0	**+6.4**	7.25	8.2
Ձու /մլն հատ/	40.1	46.5	**+6.4**	1.7	1.8
Ընդամենը				**50.95**	**53.6**

Անասնապահական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտը կազմել է շուրջ **53.6** մլրդ դրամ:

Այսպիսով բուսաբուծական և անասնապահական մթերքների իրացումից ստացված համախառն ներքին արդյունքը կազմել է 109.6 մլրդ դրամ, նախորդ տարվա 106.1 մլրդ դրամի դիմաց:

Մարզը, գտնվելով Թուրքիայի և Վրաստանի հանրապետությունների հարևանությամբ, մշտապես ենթակա է կենդանիների և մարդկանց համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների ներթափանցման վտանգին:

Հանրապետությունում գործող կարգի համաձայն անասնաբուժական սպասարկման միջոցառումներ են իրականացվել 10 հիվանդությունների նկատմամբ, ինչպես նաեւ իրականացվել են ախտորոշիչ հետազոտություններ:

2014թ. պետական բյուջեի միջոցների հաշվին մարզի գյուղատնտեսական կենդանիների նկատմամբ իրականացվել են հետևյալ հակաանասնահամաճարակային և ախտորոշիչ միջոցառումները.

Խ.Ե.Ա- Բրուցելյոզ, սերոլոգիական /117.718 հազ. գլուխ/,
Տուբերկուլինիզացիա /113.49 հազ. գլուխ/,
Մ.Ե.Ա.- Բրուցելյոզ սերոլոգիական /59.893 հազ. գլուխ/,
Խ.Ե.Ա.- Սիբիրախտ /201.040 հազ. գլուխ/,
Դաբաղ եռավալենտ /312.932 հազ. գլուխ/,
Էմկար /193.868 հազ. գլուխ/,
Մ.Ե.Ա. - Սիբիրախտ /118.390 հազ. գլուխ/,
Դաբաղ /68.976 հազ. գլուխ/,
Բրաղզոտ /7.233 հազ. գլուխ/
Խոզեր - Ժանտախտ /64.181 հազ. գլուխ/,
Թռչուններ –Ժանտախտ Հ /124.087 թև/
Մեղուներ –Վարոատոզ /18.608 հազ. փեթակ/-կրկնակի:

Մարզի 119 համայնքներում անասնաբուժական ծառայություններ են մատուցում 82 անասնաբույժներ, որի իրականացումը 2014թ. կատարվել է ամբողջությամբ, առանց բացթողումների, համապատասխան պլան-գրաֆիկի: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության եւ բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության Շիրակի մարզային կենտրոնի եւ մարզպետարանի կողմից

մարզի թվով 15 համայնքներում տարվա ընթացքում ուսումնասիրվել են գյուղատնտեսական կենդանիների կայուն հակահամաճարակային իրավիճակի ապահովմանն ուղղված միջոցառումների, համայնքների անասնաբույժների կողմից պատվիրակված լիազորությունների արդյունավետ իրականացման աշխատանքները, որի արդյունքում 2014թ. ընթացքում համաճարակների բռնկումներ չեն արձանագրվել:

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի
գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության պետ՝

Մ. Մանուկյան